ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

Թեմա՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

(ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԸ 1988-1994ԹԹ)

Առարկա՝ Պատմություն

Ուսուցչուհի՝ Սիրանուշ Հարությունյան

Ղեկավար՝ Արմեն Հայրապետյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ 4

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 4

1.1. Արցախյան հարցի ծագումը 4

1.2. Արցախյան շարժման սկզբնավորումը: 5

1.3. Շարժման վերաճումը համազգային պայքարի 6

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ 8

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԵՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1988-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 8

2.1. Զինված ընդհարումներից մինչև անկախացում /1990թ.մայիս-1991թ. սեպտեմբեր/ 8

2.2. Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումը: Պատերազմի սկիզբը: 10

2.3. Բեկում ռազմաճակատում 1993 թվական: Պատերազմի ավարտը 15

2.4. 1994 թվականի մայիսի 12-ի զինադադարը 18

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արցախյան ազատագրական պայքարն ադրբեջանական կողմի պարտադրանքով զինված հակամարտության վերածվելու նախադրյալների բազմակողմանի ուսումնասիրությունը, արցախյան հերոսական պայքարին գործուն մասնակցություն ունեցած ինքնապաշտպանական ջոկատների, կանոնավոր բանակի գործողությունները, նրանց հաղթանակների ու պարտությունների օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների գիտական հետազոտությունը հայ պատմագրության կարևոր խնդիրներից են: Թեման արդիական մեծ հնչեղություն ու կարևորություն ունի, քանի որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում պաշտպանական ուժերի մասին ոչ բոլոր փաստերն են հրապարակված: 1988-1994 թվականների իրադարձությունների խորը վերլուծությունը ցույց է տալիս, որ Ադրբեջանը հետևողականորեն կիրառելով հայկական պատմական տարածքների բռնազավթման և ցեղասպանական քաղաքականություն, բռնությամբ տեղահանելով հայ բնակչությանն իր բնօրրանից՝ տիրացել է Արցախի մեծ մասին: Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայ-ադրբեջանական հակամարտությունը դեռևս գտնվում է կարգավորման փուլում, և չնայած որ թշնամուն հաջողվել է զավթել պատմական Արցախի մեծ մասը, այնուամենայնիվ շարունակում է վարել իր ռազմատենչ քաղաքականությունը Արցախն ամբողջությամբ իրեն ենթարկելու համար:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Աշխատանքի նպատակն է ներկայացնել 1988-1994 թվականներին Արցախում ազատագրական պայքարի պատմությունը, վեր հանել ինքնապաշտպանական ջոկատների և կազմակերպված բանակի զինված պայքարի հերոսական դրվագները, ներկայացնել իրադրությունը Լեռնային Ղարաբաղում՝ լուսաբանել ներքին և արտաքին խնդիրները, ցույց տալ գոյամարտի արդյունքներն ու հետևանքները:

Աշխատանքում առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- Ներկայացնել արցախյան հարցի ծագումն ու հիմնախնդիրները:
- Վեր հանել Արցախյան շարժման պատճառները:
- Ներկայացնել 1991-1994 թվականների ընթացքում ծավալված ռազմական գործողությունները:
- Ներկայացնել առաջին արցախա-ադրբեջանական պատերազմի ավարտը և զինադադարի կնքումը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Արցախյան հարցի ծագումը

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին նրա տարածքում առաջացան մի քանի հատուկ պետական կազմավորումներ՝ Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա, Աբխազիա և Մերձդնեստր, բայց մի բան մնում է ընդհանուր՝ նրանք բոլորն իրենց անկախությունը նվաճեցին ռազմական ճանապարհով: Եվ քանդվող Միության տարածքում բռնկված տեղական պատերազմների շարքում առաջինը Ղարաբաղն էր:

Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանը զբաղեցնում է Փոքր Կովկասի արևելյան և հարավարևելյան լեռնային և նախալեռնային շրջանները, որը կազմում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասը:

1917թ. դեկտեմբերին Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո, Ղարաբաղում գործող տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ կազմավորեցին Միջկուսակցական բյուրո, որի վրա դրվեց երկրամասի կառավարման պարտականությունները. այն, փաստորեն, Ղարաբաղի կառավարությունն էր և կարելի է եզրակացնել, որ 1917թ. վերջին Լեռնային Ղարաբաղի տարածքում արդեն կար հայկական պետական կազմավորում մինչև 1918թ. մայիսի 28-ի՝ Հայաստանի անկախության հռչակումը: 1918թ. սկզբից Լեռնային Ղարաբաղի հայությունը ստիպված էր դիմագրավել իրեն մի քանի անգամ գերազանցող թաթարական հրոսակների հարձակումներին[1]:

1918-1920թթ. ընթացքում Լեռնային Ղարաբաղում թուրք-ադրբեջանական զորքերը ոչնչացրեցին տասնյակ գյուղեր և Շուշի քաղաքը: 1920թ. մարտի 23-ին թշնամին կողոպտեց և այրեց երկրամասի մայրաքաղաք Շուշին: Զոհվեց ավելի քան 20 հազ. հայ, իսկ քաղաքի հայկական թաղամասն ամբողջությամբ ավերվեց: Ոճրագործություններ եղան նաև Բաքվում, որի արդյունքում սպանվեց քաղաքի ավելի քան 50 հազ. հայ: Պատերազմի դադարեցման նպատակով քայքայված Հայաստանի Հանրապետությունը համաձայնեց վիճելի ճանաչել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: 1920թ. դեկտեմբերի 1-ին Նարիման Նարիմանովի կողմից Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման հանդիսավոր նիստում նրա հայտարարության մեջ ասվում է. «Դաշնակցականների գերիշխանության շրջանը արյունալի, ազգամիջյան սպանդի ժամանակաշրջան է, որի ընթացքում հայ և մահմեդական ժողովուրդները արյուն էին թափում և մահանում: Մուսավաթի և Դաշնակցության կառավարությունները, ժողովուրդներին վաճառելով Անտանտին վերածվեցին կույր գործիքի վերջինների ձեռքում, և նրանց իմպերիալիստական ցանկությունների մեջ մի ժողովրդին հանեցին մյուսի դեմ՝ ստեղծելով Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան և այլ տարածքային հարցեր, որոնք հնարավոր չէր լուծել Դաշնակցություն-Մուսավաթ կառավարությունների ջանքերով:

[1] Гаджиев К.С.,Большая игра на Кавевзе.Вчера,сегодня,завтра,Москва 2010,стр. 78.

Երկու հարյուրամյա հարևան ժողովուրդներ. հայեր և մահմեդականներ, Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում է ինքնորոշման լիակատար իրավունք, կասեցվում են բոլոր ռազմական գործողությունները Զանգեզուրում, և Խորհրդային Ադրբեջանի զորքերը դուրս են բերվում»[2]:

Սակայն Ռուսաստանի բոլշևիկները Հայաստանը խորհրդայնացնելուց հետո յուրօրինակ ձևով որոշեցին Լեռնային Ղարաբաղի հետագա ճակատագիրը:

1921թ. հուլիսի 4-ի Կովկասյան բյուրոյի պլենումի նիստում քննարկվում էր Ղարաբաղի հարցը:

Որոշում կայացվեց. Հաշվի առնելով այն փաստը, որ Ղարաբաղի հարցը լուրջ անհամաձայնություն առաջացրեց, ՌԿԿ Կենտկոմի կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխանցել ՌԿԿ Կենտկոմի վերջնական որոշմանը: Արդեն 1921թ. հուլիսի 5-ին ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի նիստում կրկին քննարկվեց Լեռնային Ղարաբաղի հարցը և բոլշևիկները Կոմունիստական կուսակցության կոմիտեի Կովկասյան բյուրոյի (ՌԿ(բ)Կ Կովբյուրո) իրավաբանորեն հիմնազուրկ որոշումով Լեռնային Ղարաբաղը մտցրեցին Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ՝ ելնելով մահմեդականների և հայերի ազգային խաղաղության անհրաժեշտությունից և վերին և ստորին Ղարաբաղի տնտեսական կապերից, նրա մշտական կապերը Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում՝ տալով նրան տարածաշրջանային լայն ինքնավարություն Շուշի կենտրոնով:

1923թ. երկրամասի տարածքում կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ: Ղարաբաղյան հիմնախնդիրն այսպիսով ոչ թե լուծվեց այլ «սառեցվեց» 70 տարով[3]:

1.2. Արցախյան շարժման սկզբնավորումը:

1980-ական թվականներին ԽՍՀՄ-ը տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի մեջ հայտնվեց: 1985թ. ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը փորձեց սոցիալ-տնտեսական մի շարք բարեփոխումների միջոցով երկիրը դուրս բերել այդ ծանր վիճակից և կանխել նրա հետագա քայքայումը: Սակայն ԽՍՀՄ-ի կազմի մեջ գտնվող ժողովուրդների ազգամիջյան թշնամանքը թույլ չտվեց պահպանել Խորհրդային Միությունը:

Փետրվարի 15-ին Հադրութում տեղի ունեցած շրջանային համընդհանուր ցույցը շրջկոմի բյուրոյից պահանջում է դիմել ԽՄԿԿ կենտկոմ և պահանջել ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանի կազմից և վերամիավորել Հայաստանի հետ: Համանման ցույցեր էին տեղի ունենում մաև մարզի մյուս շրջաններում:

1988թ. փետրվարի 20-ի երեկոյան Ստեփանակերտի Լենինի անվան հրապարակում և նրան հարակից փողոցներում հավաքված արցախցիների թիվը հասել էր ավելի քան 50 հազարի: Նրանք բոլորը սպասում էին նստաշրջանի որոշմանը:

---

[2] Тарасов С. Н., Мифы о Карабахском конфликте.Сборник статей, Москва, 2014, стр. 20.

[3] Перестройка и национальные отнашения. О событиях в Нагорном Карабахе и вокруг него, file:///C:/Users/COMPLUX/.pdf

Ի վերջո նստաշրջանն ընդունում է հետևյալ պատմական որոշումը. «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու համար Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև միջնորդելու մասին»՝ նստաշրջանը որոշում է. Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև ԼՂԻՄ-ն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար»[4]:

Ի պատասխան արցախցիների օրինական խնդրանքի՝ ԽՄԿԿ կենտկոմը փետրվարի 21-ին որոշում ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին», որում ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը բնութագրվեց որպես մի խումբ «անջատողականների» գործողության արդյունք:

1.3. Շարժման վերաճումը համազգային պայքարի

1988թ. փետրվարի կեսերից Երևանում ամեն օր հանրահավաքներ էին տեղի ունենում: Առավել բազմամարդ հավաք տեղի ունեցավ 1988թ. փետրվարի 22-ին: Ղարաբաղյան շարժումը ղեկավարելու և կազմակերպված հունի մեջ դնելու համար անհրաժեշտ էր ստեղծել ղեկավար մարմին: Նույն գիշերը ձևավորվեց «Ղարաբաղի պաշտպանության կոմիտեն», որը կարճ անվանվեց «Ղարաբաղ կոմիտե»: Կոմիտեի առաջին կազմի մեջ մտան Իգոր Մուրադյանը (տնտեսագետ), Վաչե Սարուխանյանը (թատերական գործիչ), Գագիկ Սաֆարյանը (մանկավարժ), և ուրիշներ:փետրվարի 25-26-ին, Երևանում ցուցարարների թիվը հասել էր աննախադեպ չափերի: Այն օրերին, երբ արցախահայությունը փորձում էր իր պայքարը շարունակել խաղաղ, քաղաքակիրթ ձևերով, Ադրբեջանում գերադասեցին նրանց դեմ պայքարել բիրտ ուժով և ահաբեկչությամբ: Դրա վառ օրինակը եղավ 1988թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող 220 հազ. բնակչություն ունեցող Սումգայիթ քաղաքում ապրող 18 հազար հայերի նկատմամբ իրագործված եղեռնագործությունը:

Ադրբեջանցի որոշ հեղինակներ պնդում են, թե Սումգայիթում հայերի սպանությունները կատարել են Կապանից իբր արտաքսված ադրբեջանցիները: Այնուամենայնիվ դատական պատասխանատվության ենթարկված ավելի քան 80 ադրբեջանցիներից և ոչ մեկը չի եղել կապանցի:

Փետրվարի վերջին երեք օրերին Սումգայիթում կազմակերպված հայկական ջարդերի հետևանքով, պաշտոնական տվյալների համաձայն, սպանվում են 29 հայ և 6 ադրբեջանցի, քաղաքի 18 հազար հայությունը դառնում է փախստական[5]:

---

[4] Перестройка и национальные отнашения. О событиях в Нагорном Карабахе и вокруг него, file:///C:/Users/COMPLUX/.pdf

[5] Սերոբյան Ս.,Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988թ մարտ ամսին, https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/10/Serobyan-Susanna-Sumgayityan-voxbergutyun.pdf

1988թ. փետրվարյան իրադարձություններից և սումգայիթյան ողբերգությունից հետո Լեռնային Ղարաբաղում վիճակը խիստ լարված էր: 66 հոգի հավաքվելով «Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրության դահլիճում՝ ընտրում են 11 հոգուց բաղկացած խորհուրդ, որին տրվում է «Կռունկ» անունը: Մարտի 8-ին «Կռունկ»-ի խորհուրդը որոշեց՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, յոթ հոգուց բաղկացած պատվիրակություն ուղարկել Մոսկվա: Սակայն Մոսկվայից պատվիրակությունը վերադառնում է անարդյունք:

«Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկ»-ի արգելումը մեծ բողոք առաջ բերեց ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև ամբողջ Խորհրդային Միությունում և սփյուռքահայության շրջանում[6]:

1988թ. վերջերից ղարաբաղյան շարժումը մտավ պայքարի նոր փուլ և ընդգրկեց ժողովրդական զանգվածների ավելի լայն շրջան: Մ. Գորբաչովի հրավերով ԼՂԻՄ կուսմարզկոմի առաջին քարտուղար Հ.Պողոսյանը հունիսի 9-ին մեկնում է Մոսկվա: Մ.Գորբաչովի հետ հանդիպմանը մասնակցում էին նաև Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղաները: Հանդիպման ժամանակ Մ. Գորբաչովը Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներին հանձնարարել էր իրենց հանրապետությունների Գերագույն խորհուրդներում քննարկել ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ-ի փետրվարի 20-ի որոշումը և ընդունել համապատասխան որոշումներ: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահությունը հունիսի 13-ին քննարկելով հարցը՝ որոշում է, որ իբր այն հակասում է «հայ և ադրբեջանցի ժողովուրդների շահերին» և չի համապատասխանում «մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, վերակառուցման խնդիրներին»[7]: Իսկ մինչ այդ՝ հունիսի 15-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը համաձայնություն էր տվել ԼՂԻՄ-ը ընդունել Հայկական ԽՍՀ կազմի մեջ:

Ի վերջո, 1988թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը, որոշեց, որ «անհնար է համարում Հայկական ԽՍՀ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմանների և սահմանադրության հիման վրա հաստատված նրանց ազգային-տարածքային բաժանման փոփոխումը»[8]:

---

[6] Աբրահամյան Հ. Բ., Կռունկ, Ստեփանակերտ, 2013, էջ 34:

[7] Վասիլյան Ս., Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությունը և արցախյան հիմնախնդիրը. http://kantegh.asj-oa.am/1105/1/125-136.pdf

[8] Ազիզբեկյան Ռ.,Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը 1988փետրվար-նոյեմբեր, http://lraber.asj-oa.am/144/1/2005-2(42).pdf

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԵՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1988-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

2.1. Զինված ընդհարումներից մինչև անկախացում /1990թ.մայիս-1991թ. սեպտեմբեր/

Միխայիլ Գորբաչովի՝ 1989թ. հունվարի 12-ի որոշումով, ԽՍՀՄ-ում առաջին անգամ մտցվում է կառավարման հատուկ ձև՝ ուղղակի կառավարում Մոսկվայից: Իրավական առումով, պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանի կազմում ինքնավար մարզի կարգավիճակը, ձևավորվում է Հատուկ կառավարման կոմիտե(ՀԿԿ), որը ենթարկվում էր ԽՍՀՄ պետական իշխանության: ՀԿԿ նախագահ է նշանակվում Արկադի Վոլսկին, ով մինչ այդ Կրեմլի հատուկ ներկայացուցիչն էր Լեռնային Ղարաբաղում:

ՀԿԿ-ի կազմավորումով Ադրբեջանը զրկվեց Լեռնային Ղարաբաղի ուղղակի կառավարումից:

1989թ. Հունիսի 17-ին «Ղարաբաղ» կոմիտեն հռչակել էր Հայոց համազգային շարժում(ՀՀՇ) հասարակական միության ստեղծումը «դրանով իսկ կազմակերպչական ձև տալով մեկուկես տարի առաջ ողջ հայության շրջանում ընդունված ազգային շարժմանը»: Օգոստոսի 19-ին «Ղարաբաղ» կոմիտեն հրապարակում է ՀՀՇ-ի ծրագիրը, որում, մասնավորապես, ասվում էր. «Հայ ժողովուրդն իր ազգային ծրագրերն իրագործելիս պետք է ապավինի իր ուժերին, հույս չդնի ուրիշի հովանավորության վրա: Մեր շարժումն ուղղված չէ որևէ ժողովրդի դեմ: Մեր սկզբունքն է՝խաղաղ ու համերաշխ ապրել հարևան բոլոր ժողովուրդների հետ: Բայց մենք համոզված ենք, որ խաղաղությունն ու համերաշխությունն ամուր են լինում միայն այն դեպքում, երբ հիմնվում են արդարության վրա, երբ չեն ոտնահարվում որևէ ժողովրդի իրավունքները…»[9]:

Վոլսկու կոմիտեն գնալով թուլանում էր, իսկ դրան զուգահեռ Ստեփանակերտում հիմնադրվում է «Միացում» շարժումը, որը գլխավորում էր Ռոբերտ Քոչարյանը: Օգոստոսի 16-ին Լեռնային Ղարաբաղում ստեղծվում է նոր մարմին՝Ազգային խորհուրդ՝ նախագահությամբ ԽՍՀՄ ժողպատգամավոր, Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանի, տեղակալներ՝Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Վալերի Աթաջանյանի և ՀԿԿ անդամ Վլադիմիր Թովմասյանի:

Ազգային խորհուրդն իր առջև խնդիր էր դրել իրագործել 1988թ. փետրվարի 20-ի որոշումը: Օգոստոսի 27-ին Ադրբեջանի Գերագույն Խորհրդի նախագահությունը Ազգային խորհուրդը ճանաչում է անօրինական: Մոսկվայի կենտրոնական իշխանությունները ևս չողջունեցին նոր մարմնի ստեղծումը՝ հասկանալով, որ Լեռնային Ղարաբաղում հաստատվում է երկիշխանություն:

[9] «Խորհրդային Ղարաբաղ» թիվ 187,19.08.1989 http://www.nkr.am/hy/karabakh-in-soviet-period

Նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը նախագահ Գորբաչովի ստորագրությամբ ընդունում է «ԼՂԻՄ-ում իրադրությունը բնականոն դարձնելու միջոցառումների» որոշում, որով Հատուկ կառավարության կոմիտեն լուծարվում է[10]:

Այս քայլով բնականաբար Մոսկվան նպատակ ուներ Ղարաբաղում վերականգնել Բաքվի լիազորությունները: Ուստի, ստեղծվում է Կազմկոմիտե, որի ղեկավար է նշանակվում Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոն:

Դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը համատեղ նիստում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման որոշում են ընդունում: Շարժման իններորդ ամսում արդեն Ստեփանակերտում տարերայնորեն ծնունդ առան առաջին ընդհատակյա ինքնապաշտպանական ջոկատները: Մինչ այդ Ադրբեջանի ղեկավարների ցուցումով առգրավվել էին երկրամասի բնակչության մի զգալի մասի մոտ գտնվող որսորդական հրացանները: Հակակարկտային հրանոթները հաշված ժամերի ընթացքում տեղափոխվել էին Ադրբեջանի տարածք:

1989թ. նոյեմբերի 27-ին Գետաշեն գյուղում տեղի է ունենում Գետաշենի ենթաշրջանի հայության առաջի համագումարը, որին մասնակցում են Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ, Կամո գյուղերից ընտրված 300 պատգամավորներ: Համագումարն ընդունում է որոշում՝ «ստեղծել Գետաշենի ենթաշրջանի Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ, Կամո գյուղերից հայ ազգաբնակչության Ազգային խորհուրդ և այն ճանաչել որպես տարածաշրջանի իշխանության և կառավարման միակ մարմին, որի որոշումների կատարումը պարտադիր է ենթաշրջանի ողջ բնակչության համար, Գետաշենի ենթաշրջանի Գետաշեն, Մարտունաշեն, Ազատ, Կամո գյուղերը դուրս բերել Ադրբեջանական ՍՍՀ Խանլարի շրջանի վարչատարածքային ենթակայությունից և միացնել հարևան Շահումյանի գյուղական համայնքին»[11]:

Մի քանի ամսվա ընթացքում Գետաշենի ենթաշրջանը Շահումյանի շրջանին միացնող Կուշչի Արմավիր գյուղը ադրբեջանականացվելու հետքևանքով Գետաշենի ենթաշրջանն իսպառ կտրվեց Շահումյանի շրջանից, իսկ 1991թ. հունվարի 12-20-ը Բաքվում, Շահումյանի և Խանլարի շրջաններում, Գետաշեն, Կամո, Ազատ գյուղերում ստեղծվեց արտակարգ դրություն՝ վանդալիզմի բացահայտ դրսևորումներով:

Սումգայիթյան ջարդերից հետո հայերի նկատմամբ բռնություններ և սպանություններ տեղի ունեցավ նաև Բաքվում: 1990 թվականի հունվարի 13-ին բազմահազարանոց հանրահավաքից հետո ամբոխը խմբերի բաժանված, նախանշված հասցեներով, ներխուժել է հայերի բնակարանները և սկսել ծեծ ու մարդկանց դուրս նետել պատուհաններից, սպանել երկաթե ձողերով ու դանակներով, բռնաբարել կանանց, շատերին ողջակիզել:

---

[10] Վասիլյան Ս., Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությունը և արցախյան հիմնախնդիրը. http://kantegh.-asj-oa.am/1105/1/125-136.pdf

[11] Միսյան Բ., Չիլինգարյան Ռ.,Գետաշեն, Երևան, 2007, էջ 327:

Հայ բնակչությունից խլել են դրամը, արժեքավոր իրերը, խնայբանկի գրքույկները, բնակարանների փաստաթղթերը: Ջարդերը շարունակվել են վեց օր: 1990 թվականի հունվարի 13-19-ի ջարդերից հետո Բաքուն հայաթափվել է (շուրջ 250 հազար հայ):

1990 թվականի մարտի 29-ին կայացել է ԽՍՀՄ գլխավոր խորհրդի փակ նիստ՝ Բաքվում կատարված դեպքերի առնչությամբ: Փոխադարձ համաձայնությամբ՝ հանձնաժողով չի ստեղծվել, իսկ հայերի ջարդերը մատնվել են մոռացության:

1990թ. սկզբից ՀՅԴ-ը սկսում է Հայաստանի և Արցախ-Ղարաբաղի տարածքում զինված պայքարի նախապատրաստական աշխատանքները: Դրությունը սրվում է, երբ 1991թ. հունվարի 14-ին Ադրբեջանի ղեկավարությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից հայկական Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը միացնել ադրբեջանական Կասում-Իսմայիլովի շրջանին՝ ստեղծելով նոր Գերանբոյի շրջան՝ վերջնականապես վերացնելով Շահումյանի շրջանի անվանումը: Նախօրոք մշակված «Օղակ» ռազմական գործողությունն սկսվեց ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը լայնատարած հարձակումով: Սկզբից ևեթ հրետանին նշանառության տակ առավ Մարտունաշենը, որտեղ Սիմոն Աչիքգյոզյանի ղեկավարությամբ ազատամարտիկների ջոկատն էր փորձում դիմադրություն կազմակերպել[12]: Սակայն զոհեր ու վիրավորներ տալով նահանջեց: Այդ ընթացքում ՕՄՕՆ-ականները գյուղի մատույցներից աստիճանաբար խորանում են դեպի կենտրոն: Ստեղծված իրավիճակում Թաթուլ Կրպեյանը հարմար պահը որսալով ցատկում է զրահամեքենայի վրա և օձիքից քարշ տալով դուրս է հանում 8 հոգու, այդ թվում՝ ավագ լեյտենանտ Ֆեոդորովին: Նա սպառնում է պայթեցնել իրեն բանակայինների հետ միասին, եթե չկատարվեն իր բոլոր պահանջները. կապ հաստատել հրամանատարության հետ, դադարեցնել հարձակումն ու սպանությունները, ՕՄՕՆ-ը հանել գյուղի տարածքից: Ի վերջո Կրպեյանի սպառնալիքների ներքո սպան զինաթափման հրաման է տալիս: Ժամը 13:00-ին գործողության հրամանատարությունը նահանջի հրաման արձակեց: Մայիսի 1-8-ին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի բնակիչները, նախ կանայք, երեխաները և տարեցները, ռազմական ուղղաթիռներով տեղափոխվեցին Ստեփանակերտ, մեկ շաբաթ անց ինքնաթիռներով և ուղղաթիռներով՝ Իջևան, այնուհետև՝ տղամարդիկ զինվորականների ուղեկցությամբ տեղափոխվեցին Կիրովաբադ, ապա՝ ավտոբուսներով դեպի ՀՀ սահմանը՝ Շամշադինի շրջանի Բերդ ավան: 1988 թվականից մինչև 1991թ. ապրիլի վերջն իր վրա վերցնելով թշնամու բոլոր հարվածները, թույլ չտրվեց, որպեսզի թշնամին ներխուժի Արցախ-ԼՂԻՄ, քանի որ գետաշենցիների և Հայաստանից մեկնած մի քանի ջոկատներով կազմակերպված ինքնապաշտպանությամբ փակված էր դեպի Արցախ «դարպասը»[13]:

2.2. Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակումը: Պատերազմի սկիզբը:

1991թ.-ի Օգոստոսի 30-ին Մութալիբովը հռչակեց Ադրբեջանի անկախությունը, սեպտեմբերի 14-ին ինքնափլուզվեց Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը,

[12] Բարսեղյան Ի., Ինքնապաշտպանական մարտերը Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանում /1988-1991 թթ. մայիս/, Երևան, 2015, էջ 11:
[13] Կրիվոպուսկով Վ., Խռովահույզ Ղարաբաղ, Երևան, 2008, էջ 210:

բայց նախկին ղեկավարությունը մնաց իշխանության գլուխ: Սեպտեմբերի 8-ին Մութալիբովին ընտրեցին Ադրբեջանի նախագահ:

Հայաստանում 1991թ.-ի սեպտեմբերի 21-ին նախատեսած հանրաքվեն անկախության մասին դարձավ ձևական, քանի որ Հայաստանի բնակչության 95 տոկոսը քվեարկեց «Այո՛»: Երեք շաբաթ անց՝ հոկտեմբերի 16-ին, ձայների մեծամասնությամբ նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

Հայաստանի իշխանությունները շրջանցելով միջազգային մակարդակի քննադատության փաստը, Արցախը հայտարարեցին «անկախ» և հետևաբար անենթակա Երևանին: 1991թ.-ի սեպտեմբերի 2-ին, Ադրբեջանի անկախության հռչակումից հետո, ԼՂԻՄ տարածքային խորհուրդը Ստեփանակերտում հռչակվեց նոր Լեռնային Ղարաբաղը անկախ պետություն: 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցիները բոյկոտում են հանրաքվեն, թեև նրանք ներառված էին ցուցակներում: Դեկտեմբերի 28-ին տեղի են ունենում խորհրդարանական ընտրություններ, մեծամասնական ընտրակարգով ձևավորվում է 75 հոգանոց Գերագույն Խորհուրդ: Ընտրություններում հաղթեց ՀՅԴ կուսակցությունը: Նորընտիր ազգային ժողովի խոսնակ և փաստացի տարածաշրջանի ղեկավար ընտրվեց երիտասարդ պատմաբան Արթուր Մկրտչյանը, ով հանդիսանում էր «Դաշնակցություն» ազգային կուսակցության անդամ, որը վատ հարաբերությունների մեջ էր Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ[14]:

1992թ. հունվարին Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը Արկադի Տեր-Թադևոսյանին նշանակում է ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, ով նա կազմակերպեց Տող գյուղի գրավումը նույն տարվա հոկտեմբերի 30-31-ին:

Ղարաբաղյան ուժերը դեկտեմբերի 14-15-ին Վլադիմիր Բալայանի և Աշոտ Ղուլյանի հրամանատարությամբ գրավում են կրակակետի վերածված, Ստեփանակերտը շրջապատող ադրբեջանական բնակավայրերից Ջամիլլուն: Դեկտեմբերի 23-ին Ժիրայր Սեֆիլյանի և Վլադիմիր Բալայանի, ինչպես նաև շրջակա գյուղերի ինքնապաշտպանական ջոկատներն ավելի քան վեց ժամ տևած մարտում գրավում են Ասկերանի ադրբեջանական մեկ այլ՝ Լեսնոյ գյուղը, ոչնչացնում հակառակորդի կրակակետերը: Ադրբեջանական ուժերն առաջին լուրջ կորուստներն են կրում՝ տալով շուրջ 100 սպանված:

Լեսնոյից հետո ադրբեջանական երկրորդ լուրջ պարտությունը արձանագրվեց Քարինտակում: Ադրբեջանցիները Քարինտակը անվանում էին Դաշալթը, հետագայում «Գանլը դարա», թարգմանաբար՝արյան կիրճ: Մոտ 700 բնակիչ ունեցող գյուղը գրավելու երեք փորձ է եղել: 1992թ. հունվարի 26-ին վերջին փորձի ընթացքում, ադրբեջանական ջոկատները ջախջախվեցին Քարինտակի մոտ՝Շուշիի ձորում: Հունվարի 26-ի մարտում գյուղը տվեց 22 զոհ, որից 12-ը՝ տեղացիներ, մյուս 10-ը՝ հարևան գյու-

[14] Հարությունյան Մ., Քարինտակի հերոսամարտի ռազմագիտական տեսանկյուններն ըստ ադրբեջանական աղբյուրների, Ստեփանակերտ, 2020, էջ 4:

ղերից օգնության եկած տղաներ էին։ Ադրբեջանցիները տվեցին տասնյակ զոհեր և վիրավորներ։

Ապա Ադրբեջանի պաշտպանության նախարար Թաջեդդին Մեհտիևը փորձեց Քարինտակը գրավել Շուշիից։ Նրա ջոկատն ընկավ ծուղակի մեջ, սպանվեցին մոտ 70 զինվորներ, որոնցից շատերը՝ փախուստի ժամանակ։ Այդ ջախջախիչ պարտությունից հետո Մեհտիևը լքեց Շուշին և ազատվեց պաշտոնից։

Փետրվարի 9-11-ը ղարաբաղյան ուժերը վերահսկողության տակ էին վերցրել Մալիբեյլուն և Շուշիի շրջանի Ղուշչիլար գյուղերը, փետրվարի 17-ին՝ Մարտունու Ղարադաղլուն, իսկ մի քանի օր անց՝ Վերին Վեյսալուն։ Ադրբեջանական կողմը պատասխանում էր՝ հիմնականում Ստեփանակերտի վրա արկեր նետելով։ Փետրվարի 16-23-ն ընկած օրերին Շուշիի և Խոջալուի դիրքերից անդադար ռմբահարվում էր Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքը, ավերվում է մոտ 50 շենք, սպանվում և վիրավորվում են մի քանի տասնյակ խաղաղ բնակիչներ։

Ուստի ինքնապաշտպանության շտաբը խնդիր դրեց վերջնականապես ճեղքել շրջափակումը, ինչի իրականացման համար անհրաժեշտ էր չեզոքացնել Ասկերանի շրջկենտրոն տանող մայրուղու վրա գտնվող Խոջալուի պլացդարմը։ Այս արգելքի հաղթահարումը հնարավորություն կտար ԼՂ ինքնապաշտպանական ջոկատներին՝ վերահաստատվել երկրամասի գլխավոր մուտքի բարձունքներում, ապահովելով մայրաքաղաք տանող հիմնական մայրուղու անվտանգությունը։

1992թ. փետրվարի 15-ին ԼՂ ինքնապաշտպանության մարտական ջոկատները, հարմար դիրքեր գրավելով Խոջալուի արևմտյան ցածրադիր բլրաշարի երկարությամբ, ադրբեջանական զորամիավորումներից պահանջեցին առանց մարտի, անվտանգ միջանցքով թողնել երկրամասի տարածքը, հանգրվանել Աղդամ քաղաքի տարածքում։

Խոջալուն ռազմական հենակետ էր, որտեղից ռմբահարվում էին Ստեփանակերտն ու հայկական մյուս բնակավայրերը։ Բնակավայրը գրավելու գործողությունը մշակել և ղեկավարել էր Արկադի Տեր-Թադևոսյանը։ Ղարաբաղյան ստորաբաժանումները Խոջալու պետք է մտնեին 4 ուղղություններով, առաջին՝ Մեհտիշենից, երկրորդ՝ Նորագյուղից, երրորդ՝ Քաթուկից, չորրորդ՝ օդանավակայանի մերձակայքից։ Կառկառ գետի երկայնքով միջանցք էր թողնվել, որպեսզի հեռանան խաղաղ բնակիչներն ու ադրբեջանցի զինվորները[15]։

Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնել օդանավակայանը։

1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական ջոկատները Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ հասան առաջավոր դիրքերին։ Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով 8 զոհ և 20 վիրավոր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերին։

[15] Հովսեփյան Մ., Շուշիի առանձին հրաձգային գումարտակի մարտական ուղին 1991-1994թթ., Ստեփանակերտ, 2017, էջ 2:

Վերջին հենակետի՝ հինգհարկանի շենքի գրավումով երեկոյան ժամը 16-ին ամբողջությամբ ազատագրվել էր։

Այս իրադարձություններից հետո՝ 1992թ. մարտի 16-ին, Հայաստանն ու Ադրբեջանը Թեհրանում ստորագրեցին հուշագիր՝ ղարաբաղյան հակամարտության գոտում մեկ շաբաթով դադարեցնել կրակը։ Մարտի 20-ին Աղդամով Ստեփանակերտ է ժամանում Մահմուդ Վայեզին, ղարաբաղյան իշխանություններին ներկայացնում մեկշաբաթյա զինադադարի պայմանները։ Նույն օրը կեսօրին զինադադարը մտնում է ուժի մեջ և պահպանվում ավելի քան մեկ շաբաթ։

Մարտի վերջերին իրանական միջնորդությամբ հաստատված հրադադարը խախտվում է։ Շուշիից շարունակվում էր Ստեփանակերտի ռմբահարումը։

Շուշիի գործողության մշակմանը ղարաբաղյան հրամանատարությունը ձեռնամուխ էր եղել Խոջալուից անմիջապես հետո։ Ապրիլի 28-ին որոշվեցին հարձակման հիմնական ուղղությունները։ Մայիսի 4-ին պետք է գրոհը սկսվեր, սակայն անսպասելի ձյան պատճառով հետաձգվում է մի քանի օրով։ Մայիսի 7-ին ղարաբաղյան ուժերը գրոհը սկսեցին միանգամից չորս ուղղություններով։ Գործողությունը ղեկավարել է Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը[16]։

Մայիսի 8-ի կեսօրին, Շուշիի պաշտպանությունը ճեղքվեց հյուսիսից և արևելքից։ Ստեփանակերտի և Շոշ գյուղի ուղղությունից քաղաք մտած ազատամարտիկները կռիվներ էին մղում շուկայի շրջակայքում, այսինքն՝ քաղաքի կենտրոնական թաղամասերում։ Երեկոյան ժամը 18-ին հայ մարտիկները վերջնականապես տիրացան քաղաքի կենտրոնին, ադրբեջանական զինյալների հսկողության տակ թողնելով միայն նրա հարավային հատվածը[17]։

Ստեղծված իրավիճակում ադրբեջանական բանակի հրամանատարությունը ձեռնամուխ եղավ հակամարտության գոտու ողջ երկայնքով մի շարք լայնածավալ ռազմական գործողությունների՝ նպատակ ունենալով հնարավորության սահմաններում ղարաբաղյան ուժերի ուշադրությունը շեղել Շուշի-Լաչին ռազմաճակատային հատվածում։ Մայիսի 8-ին, ժամը 15:00-ին ադրբեջանական ուղղաթիռները, ներխուժելով հանրապետության օդային տարածքը, գնդակոծության ենթարկեցին Մարտունու շրջանի Ավդուռ, Մյուրիշեն, Նորշեն և Ասկերանի շրջանի Շոշ և Քռասնի գյուղերը։

Մայիսի 8-ի ուշ երեկոյան Շուշիի երկնակամարը աստիճանաբար խաղաղվեց։ Չեչեն դաշտային հրամանատար Շամիլ Բասաևը 90-ականներին Ղարաբաղ էր մեկնել սրբազան պատերազմի՝ ջիհադի։ Նրա մոջահեդները վերջիններից են հեռացել Շուշիից։ Բասաևը 2000թ. հուլիսին Չեչնիայի լեռներում ադրբեջանցի լրագրողին հավաստիացնում էր, որ Շուշին շրջափակման մեջ ընկավ զուտ այն պատճառով, որ ադրբեջանական բանակում չկար կարգուկանոն և ղեկավարություն։

Ռազմական գործողության ժամանակ ղարաբաղյան կողմը տվել է 58 զոհ։

---

[16] Հովսեփյան Մ., նշվ. աշխ., էջ 2։

[17] Գասյան Զ.,1992թ. Խոջալուի իրողությունների լուսաբանման հարցի շուրջ,Ստեփանակերտ,2017,էջ 2։

Մինչ Ադրբեջանում տեղի էր ունենում իշխանափոխություն, ղարաբաղյան ուժերն ազատագրում են Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի հայկական գյուղերը, իսկ մայիսի 18-ին վերահսկողության տակ է առնվում Լաչինը, բացվում է ցամաքային միջանցք Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև: Շուտով Գորիս-Ստեփանակերտ ճանապարհով լեռնային Ղարաբաղ են հասցվում տասնյակ տոննա մարդասիրական բեռներ: Սակայն Լաչինով պատերազմը չէր ավարտվում, այլ մտնում էր նոր փուլ:

Այս օրերին՝ 1992թ. մայիսի 15-ին Ուզբեկստանտի մայրաքաղաք Տաշքենդում, ստորագրվում է Հավաքական անվտանգության պայմանագիրը(ՀԱՊ), խորհրդային զենքը բաժանվում է ԱՊՀ երկրների միջև: Տաշքենդի համաձայնագրով Ադրբեջանին ու Հայաստանին բաժին հասավ 220-ական տանկ, 220-ական զրահամեքենա և 285-ական հրետանային համակարգ: Խորհրդային զինանոցից ինչ-որ բան հասնում է նաև Ղարաբաղին: Ստեփանակերտից 366-րդ մոտոհրաձգային գունդը դուրս բերելիս ղարաբաղցիներն ընդդիմանում են:

1992թ. ապրիլի 14-ին Արթուր Մկրտչյանի՝ իր բնակարանում խորհրդավոր պայմաններում ողբերգական մահից հետո, Լեռնային Ղարաբաղի առաջնորդի պարտավորությունները ստանձնեց Գեորգի Պետրոսյանը: Հայաստանի նախագահ Տեր-Պետրոսյանի հրամանագրով ապրիլի 17-ին սուգ հայտարարվեց Հայաստանում: Առաջին անգամ երրորդ հանրապետությունում իջեցվեց պետական դրոշը:

Հարկ է նշել, որ ադրբեջանցիների դեմ պայքարից բացի, Լեռնային Ղարաբաղում կար նաև ներքին պայքար: Երեք օրերի ընթացքում՝ հունիսի 3-ից 5-ը, խորհրդարանում տեղի են ունենում մի քանի քվեարկություններ, սակայն ո՛չ Գեորգի Պետրոսյանին, ո՛չ Ռոբերտ Քոչարյանին չի հաջողվում նախագահ ընտրվելու անհրաժեշտ ձայներ ապահովել: Լեռնային Ղարաբաղում շարունակվող իշխանական պայքարն ավարտվում է Պաշտպանության պետական կոմիտեի(ՊՊԿ) ձևավորումով: ՊՊԿ-ի նախագահ է նշանակվում Ռոբերտ Քոչարյանը, ում վրա են դրվում նաև կառավարության ղեկավարի լիազորությունները: Այս քայլը բացատրվում էր Ադրբեջանի լայնածավալ ռազմական գործողություններին միասնական ճակատով դիմակայելու անհրաժեշտությամբ: ՊՊԿ-ն կազմված էր 7 անդամից: Կարեն Բաբուրյանը, ապահովում էր ՊՊԿ-ի և Գերագույն խորհրդի, իսկ Վալերի Բալայանը, ով խորհրդարանում պաշտպանության հանձնաժողովն էր ղեկավարում՝ Գերագույն խորհրդի և բանակի կապը:

Քոչարյանի առաջին տեղակալ է նշանակվում Առուշանյանը: ՊՊԿ-ի մյուս երեք անդամներն էին Սերժ Սարգսյանը՝ բանակի նախարար, Սամվել Բաբայանը՝ բանակի հրամանատար և Արմեն Իսագուլովը՝ ոստիկանության ղեկավար: Լեռնային Ղարաբաղում ՀՅԴ-ի իշխանության սահմանափակման հետ ուժեղանում էր ՊՊԿ-ի զինվորական թևը՝ ի դեմս 27-ամյա Սամվել Բաբայանի:

Իսկ Ադրբեջանում 1992թ. հունիսի 7-ին նախագահական ընտրություններում ձայների ավելի քան 60 տոկոսով նախագահ է ընտրվում Ժողճակատի առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը: Նախագահական ընտրություններից հինգ օր անց՝ հունիսի 12-ից

15-ն ընկած ժամանակահատվածում, ադրբեջանական զինուժը լայնածավալ գրոհով վերահսկողության տակ է առնում Ասկերանի, Շահումյանի և Մարտակերտի շուրջ մեկուկես տասնյակ բնակավայրեր, Շահումյանի ողջ շրջանը։

1992թ.-ի ամռանը և աշնանը հայկական ուժերը կենաց ու մահու կռիվ էին մղում Լեռնային Ղարաբաղի տարածքում։ Ավելի քան կես տարի ռազմական գործողությունները հիմնականում ծավալվում էին Մարտակերտի շրջանի բնակավայրերում։ Այս շրջանում սպանվեցին Լեոնիդ Ազգալդյանը, Աշոտ Ղուլյանը, Սամվել Շահմուրադյանը և ուրիշներ։

2.3. Բեկում ռազմաճակատում 1993 թվական։ Պատերազմի ավարտը

1993թ.-ը պատերազմական երեք տարիներից Ադրբեջանի համար ամենաանհաջողն էր։ Մինչև փետրվարի վերջերը ղարաբաղյան ուժերն ազատագրեցին Մարտակերտի շրջանի ավելի վաղ գրավված շուրջ մեկուկես տասնյակ գյուղերը։ Այս օրերին ղարաբաղյան ուժերը շարունակում են առաջխաղացումը և վերահսկողության տակ վերցնում ադրբեջանցիների կողմից գրավված Մարտակերտի գյուղերը։ Թվում էր՝ նրանք կշարունակեին խորանալ Մարտակերտի ուղղությամբ, սակայն հակառակորդի համար անակնկալ փոխեցին ուղղությունը դեպի Քելբաջար, առանց որի գրավման չափազանց դժվար կլիներ Մարտակերտի պաշտպանությունը։

Քարվաճառի (Քելբաջար) գործողությունը սկսելուց առաջ ղարաբաղյան ուժերը հակառակորդին տեղեկացնում են սպասվող գրոհի մասին։ Իրենք՝ բնակիչները դա հաստատել են միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ զրույցներում։ Ղարաբաղյան զորամիավորումները Քելբաջարի ղեկավարությանը երկու օր ժամանակ են տվել և պահանջել հանձնել քաղաքը։ Արդեն փետրվար-մարտ ամիսներին, երբ ղարաբաղյան ուժերը մեկը մյուսի հետևից ազատագրում էին Մարտակերտի գյուղերը, Քելբաջարը փաստացի շրջափակման մեջ էր։ Միակ ճանապարհը՝ Քելբաջարից Միր Բաշիր և դեպի Ադրբեջանի մյուս մասերը, անցնում էր Մարտակերտի շրջանով, որն արդեն ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ էր։ Մարտի 27-ից ապրիլի 5-ն ընկած ժամանակահատվածում ղարաբաղյամ ուժերն ամբողջությամբ վերահսկողության տակ առան Քելբաջարի շրջանը, որտեղ մոտ 60 հազ. քրդեր և ադրբեջանցիներ էին բնակվում[18]։

80 բնակիչներ գերվեցին, 150 զինվորներ պատանդ վերցվեցին։ Նրանց տեղափոխեցին Ստեփանակերտ՝ ադրբեջանական գերության մեջ գտնվող հայերի հետ փոխանակելու նպատակով։

Քելբաջարի դեպքերով, ըստ էության, սկսվում են ադրբեջանական բանակի պարտությունները, որոնք շարունակվեցին մինչև 1994-ի մայիսյան զինադադարը։

Քելբաջարի գրավմանն առաջինը և ամենակոշտն արձագանքեց Անկարան։ Ապրիլի 4-ին Թուրքիան կառավարական որոշումով փակեց Հայաստանի հետ սահմանը։ Նախագահ Օզալն ապրիլի 6-ին Տաշքենդից դատապարտեց «հայերի ագրե-

[18] Աբրահամյան Հ.,Մարտնչող Արցախը 1917-2000,Գլուխ Գ/1985-2000/,Ստ.,2007,էջ 446։

սիան»՝ հիշեցնելով, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն արդեն վաղուց է դուրս եկել այդ տարածքի շրջանակներից և «Ադրբեջանի դեմ Հայաստանի անսքող ագրեսիայի բնույթ ստացել»[19]:

Քելբաջարից հետո Ադրբեջանում անկայունություն էր. հունիսի առաջին օրերին Էլչիբեյի դեմ ապստամբում է Սուրեթ Հուսեյնովը, ում փետրվարին հեռացրել էին մարտական գործողություններում անբանիմացության մեղադրանքով: 1993թ. հունիսի 4-6-ը Գյանջան, Աղդամը, Մինգեչաուրը, Խանլարն ու Լենքորանն անցնան ապստամբների ձեռքը: Քելբաջարից ղարաբաղյան ուժերի դուրսբերումը և կրակի դադարեցումը դարձան ԵԱՀԿ-ի և ռուսական միջնորդության գլխավոր խնդիրը: Հունիսի 17-ին Ռուսաստանի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց դադարեցնել հրետանային ռմբակոծումներն Աղդամի և Ստեփանակերտի միջև: Հունիսի 27-ին Ստեփանակերտը և Բաքուն պայմանավորվեցին մեկ շաբաթով հարձակողական գործողությունները դադարեցնել Աղդամի և Մարտակերտի շրջաններում: Մեկ օր անց, սակայն, ղարաբաղյան ուժերը գրոհով ազատագրեցին Մարտակերտը: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը հուլիսի 2-ին տարածեց հայտարարություն՝ Ադրբեջանին առաջարկելով ուղիղ բանակցություններ, հավաստիացնելով նաև քննարկել Քելբաջարից ուժերի դուրսբերման խնդիրը:

Ամռան ամիսներին Ադրբեջանը քաոսի մեջ էր:Ղարաբաղյան ուժերն օգտագործեցին Ադրբեջանում ստեղծված ներքաղաքական անկայունությունը: Հուլիսի 23-ին ընկավ Աղդամը: Աղդամ քաղաքն ազատագրելու ժամանակ հայեր տվել են ընդամենը 11 զոհ, որոնցից 4-ը մահացել են ականի պայթյունից:

Հուլիսի 28-ին Ռուսաստանի միջնորդությամբ Մարտակերտի հատվածում Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտոնյաների միջև տեղի ունեցած չորսժամյա բանակցություններում որոշվեց մեկ շաբաթով հրադադար հաստատել:

Օգոստոսի երրորդ տասնօրյակում՝ մեկ շաբաթվա ընթացքում, Ադրբեջանը կորցրեց երեք շրջան. օգոստոսի 23-ին ղարաբաղյան ուժերը գրավեցին Ֆիզուլի քաղաքն ու շրջանի տասնյակ բնակավայրեր, երկու օր անց՝ Ջեբրայիլի շրջանն ամբողջությամբ: Չնայած Երևանի հորդորներին՝ ղարաբաղյան ուժերը ձեռնամուխ եղան Ղուբաթլուի գործողությանը:

Օգոստոսի 29-ին դուրս գալով Ղուբաթլու-Զանգելան մայրուղի՝ ղարաբաղյան ուժերը փակեցին Խանլրղի կամուրջը, Լաչին-Մամեդբեյլի ճանապարհի խաչմերուկները: Օգոստոսի 31-ին Ադրբեջանը կորցրեց Ղուբաթլուն և շրջանի մի մասը: Ղարաբաղյան ուժերը Ջեբրայիլում տվեցին շուրջ տասնյակ, Ղուբաթլուում՝ շուրջ հիսուն զոհ: Նույն օրը Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև համաձայնագիր ստորագրվեց կրակը 10 օրով դադարեցնելու վերաբերյալ: Տեր-Պետրոսյանը Ղարաբաղի ղեկավարությանը հորդորեց որպես բարի կամքի դրսևորում «անհապաղ հետ քաշել իր

[19] Աբրահամյան Հ.,նշվ. աշխ., էջ 446:

առաջավոր ջոկատներն ավելի վաղ ձևավորված անջատման գիծ»[20]: Քոչարյանն ի պատասխան Հայաստանի նախագահի դիմումի, որոշում է զինված ուժերը հետ քաշել Խոջիկ-Խանլըղ-Չերելի գծից դեպի նախկինում զբաղեցրած դիրքերը:

Հեյդար Ալիևի իշխանության օրոք Ադրբեջանը կորցրեց հինգ շրջան՝ Ջեբրայիլը, Ղուբաթլուն, Զանգելանը՝ ամբողջությամբ, Աղդամը և Ֆիզուլին՝ մասամբ: 1993թ. հոկտեմբերի 3-ին Ադրբեջանում կայացան նախագահական արտահերթ ընտրություններ. Հեյդար Ալիևը ստացավ ձայների անհավանական 98.8 տոկոսը:

1993թ. հոկտեմբերի դրությամբ ԼՂՀ-ից արևելք, արևմուտք և հարավ ադրբեջանի տարածքները գտնվում էին հայերի վերահսկողության տակ, բացառությամբ Զանգելանի շրջանի, որը ևս 3 կողմից շրջափակված էր և միայն հարավային կողմով սահման կար դեպի Իրան: Հոկտեմբերի 24-ին ղարաբաղյան ուժերը գրավեցին Հորադիզը, չորս օր անց՝ Մինջևանը, իսկ մինչև հոկտեմբերի 31-ը Զանգելանի շրջանն ամբողջությամբ: Զանգելանում ղարաբաղյան ուժերը տալիս են մոտ տասը զոհ, ինչը ցույց է տալիս, որ լուրջ դիմադրություն չի եղել:

Դեկտեմբերի 11-ին Ալիևը ղարաբաղյան ուժերի կողմից գրավված ադրբեջանական շրջանների ղեկավարների և զինվորական հրամանատարության հետ հանդիպման ժամանակ, որը ցուցադրվում էր հանրային ալիքով Ալիևը մեղադրանք ներկայացրեց զինվորականների հասցեին և պահանջեց բացատրել նրանց փախուստի պատճառները: Նա ցավով նշեց, որ ողջ Զանգելանի տարածքը գրավվել է ընդամենը 27զոհով:

1994թ Հունվարի առաջին օրերին ադրբեջանական բանակը ղարաբաղյան դիրքերի վրա հարձակումը շարունակեց միանգամից երեք ուղղություններով՝ հյուսիսային՝ Մարտակերտ-Քելբաջարի, արևելյան՝ Աղդամ-Մարտունիի և հարավարևելյան՝ Հորադիզի հատվածներում: Հակառակորդը հետ բերեց «Հորադիզ» երկաթուղային կայարանը:

Հունվարի առաջին շաբաթվա ընթացքում ադրբեջանական ուժերին հաջողվեց ճեղքել և մոտ 15 կմ խորությամբ և 5 կմ լայնությամբ առաջանալ հարավարևելյան՝ Հադրութի ուղղությամբ: Դրան նպաստեց Իրանի տարածքով ադրբեջանական դիվերսիոն խմբավորման անցումը ղարաբաղյան ուժերի թիկունք: Հունվարի 22-ին ադրբեջանական բանակը լայնածավալ գրոհ է ձեռնարկում ռազմաճակատի ողջ երկայնքով:

Նրանք անցնում են Օմարի լեռնանցքը և անակնկալի բերում հայկական զորքերին: Հունվարի 24-ին ադրբեջանական կողմը հայտարարեց, որ Չարփլի գյուղի մոտ շրջափակման մեջ է վերցրել և գրեթե ամբողջությամբ ջախջախել 240 հոգանոց Վանաձորի դիվիզիան:

Փետրվարի 18-ին ղարաբաղյան ուժերը դուրս եկան Օմարի լեռնանցք՝ կրկին ամբողջությամբ վերահսկողության տակ առնելով Քելբաջարի շրջանը: Արցախ-ադրբեջանական պատերազմն ավարտվեց ղարաբաղյան կողմի հաղթանակով: Ղա-

[20] Ованнисян А., Некоторые аспекты военного искусства в период арцахской войны 1993-1994гг., Ереван, 2014, стр. 2.

բաբաղյան ուժերը լիովին վերահսկում էին Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև Կուբաթլուն, Զանգելանը, Ջեբրայիլը, Ֆիզուլին, Քելբաջարը, Աղդամը։

Ընդհանուր առմամբ, 1988-1994թթ. արցախա-ադրբեջանական պատերազմին ղարաբաղյան ուժերի կորուստը կազմել է 2 հազար մարդ, իսկ ադրբեջանական կողմինը ավելի քան 25 հազ. զոհ, որոնցից հայտնի չէ, թե քանիսն են կազմել խաղաղ բնակիչները, քանիսը զինվորականները։

2.4. 1994 թվականի մայիսի 12-ի զինադադարը

Զինադադարն իր փաստաթղթային ձևակերպումը ստացավ 1994 թվականի մայիսին Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ.Մամեդովի, Հայաստանի պաշտպանության նախարար Ս.Սարգսյանի և ԼՂ Պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանի (ստորագրել են մայիսի 9 -ին 10-ին 11-ին համապատասխանաբար) կողմից ՝ ՌԴ պաշտպանության նախարար Պ.Գրաչովին և արտաքին գործերի նախարար Ա.Կոզիրևին ուղղված համատեղ նամակում, որտեղ նրանք հայտնեցին հակամարտող կողմերի պատրաստակամությունը՝ 1994 թվականի մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը դադարեցնել կրակը, ինչը և տեղի ունեցավ։

Մայիսի 16-ին Մոսկվայում բիշքեկյան պայմանագրի իրավաբանական ձևակերպման նպատակով տեղի է ունենում Սերժ Սարգսյանի, Մամեդռաֆի Մամեդովի և Սամվել Բաբայանի հանդիպումը, որի ընթացքում քննարկվում է «1994թ. փետրվարի 18-ի արձանագրության իրականացման կարգի արձանագրությունը» փաստաթուղթը։ Համաձայնագիր է ստորագրվում կրակը դադարեցնել մայիսի 17-ի ուղիղ կեսգիշերին, ինչպես նաև պատրաստվում է փաստաթուղթ, որով նախատեսվում էր ղարաբաղյան և ադրբեջանական զորքերի տարանջատում, կողմերի միջև բուֆերային գոտու ստեղծում, խաղաղարար ուժերի տեղակայում։ Փաստաթուղթը ստորագրում են Պավել Գրաչովը, Սերժ Սարգսյանը և Սամվել Բաբայանը։ Մամեդովը փաստաթուղթը չի ստորագրում. նրան շտապ կանչում են Բաքու։ Թեպետ Ադրբեջանը հրաժարվում է ստորագրել մոսկովյան համաձայնագրի ամփոփիչ արձանագրությունը, ղարաբաղյան հակամարտության գոտում տևական հրադադարի սկիզբ է դրվում։ Իրավամբ, դժվար էր հավատալ, որ Ղարաբաղում վերջապես հրադադար է հաստատվում, վերջապես կանխվում է արյունահեղությունը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով խնդրո առարկա հանդիսացող թեմայի ուսումնասիրությունը՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Ղարաբաղյան հիմնախնդիրն առաջինն է ԽՍՀՄ տարածքում արյունահեղ պատերազմների վերաճած ազգամիջյան հակամարտությունների շարքում, որն առանձնանում է թե՛ իր բարդությամբ, թե՛ իր շահերի ու դիրքորոշումների հակասությամբ:
- Ադրբեջանի կողմից տասնամյակներ իրագործվող հայատյաց քաղաքականությունը վերաճեց բացահայտ ցեղասպանական գործողությունների, որը հանգեցրեց տարածաշրջանում ազգային-ազատագրական պայքարի վերելքին:
- Խոջալուում տեղի ունեցած իրադարձություններից հետո, ինչպես նաև Շուշիի ազատագրումից և Լաչինի միջանցքով Հայաստանի հետո ցամաքային կապ հաստատելուց, սրվել էր իրադրությունը Ադրբեջանի հանրապետության ներքաղաքական կյանքում:
- 1992թ. ամռանը, հակամարտության ռազմական գործողությունների սրման պայմաններում, երբ Ադրբեջանը գրանցել էր որոշակի հաջողություններ, մի նոր միջնորդական նախաձեռնությամբ հանդես եկավ Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը: Նպատակը կրկին մեկն էր.հասնել ռազմական գործողությունների դադարեցմանը: Այստեղ էլ հարկ ենք համարում նշել, որ Նազարբաևի այս նախաձեռնությունը ևս ի սկզբանե դատապարտված էր անհաջողության այն պարզ պատճառով, որ Ղազախստանի դիրքորոշումը կողմնակալ էր:
- Հիմնահարցի և հակամարտության կարգավորման գործընթացում առանձնանում է Ռուսաստանի Դաշնության դերն ու նշանակությունը: Ռուսաստանը միջնորդներից միակն էր, որ կարողացավ հասնել ռազմական գործողությունների դադարեցմանը և երկարատև զինադադարի հաստատմանը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբրահամյան Հ. Բ., Կռունկ, Ստեփանակերտ, 2013, էջ 34:
- Աբրահամյան Հ.,Մարտնչող Արցախը 1917-2000,Գլուխ Գ/1985-2000/,Ստ.,2007,էջ 446:
- Ազիզբեկյան Ռ.,Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը 1988 փետրվար-նոյեմբեր, http://lraber.asj-oa.am/144/1/2005-2(42).pdf
- Բարսեղյան Ի.,Ինքնապաշտպանական մարտերը Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանում/1988-1991թթ. մայիս/,Երևան,2015,էջ 11:
- Գասյան Զ.,1992թ. Խոջալուի իրողությունների լուսաբանման հարցի շուրջ,Ստեփանակերտ,2017,էջ 2:
- «Խորհրդային Ղարաբաղ» թիվ 187,19.08.1989 http://www.nkr.am/hy/karabakh-in-soviet-period
- Կրիվոպուսկով Վ., Խռովահույզ Ղարաբաղ, Երևան, 2008, էջ 210:
- Հարությունյան Մ., Քարինտակի հերոսամարտի ռազմագիտական տեսանկյուններն ըստ աղբբեջանական աղբյուրների, Ստեփանակերտ, 2020, էջ 4:
- Հովսեփյան Մ., Շուշիի առանձին հրաձգային գումարտակի մարտական ուղին 1991-1994թթ., Ստեփանակերտ, 2017, էջ 2:
- Սերոբյան Ս.,Սումգայիթյան ողբերգությունը խորհրդային պարբերական մամուլում 1988թ մարտ ամսին, https://artsakhlib.am/wp-content/uploads/2018/10/Serobyan-Susanna-Sumgayityan-voxbergutyun.pdf
- Սիսյան Բ.,Չիլինգարյան Ռ.,Գետաշեն,Երևան,2007,էջ 327:
- Վասիլյան Ս., Հատուկ կառավարման կոմիտեի գործունեությունը և արցախյան հիմնախնդիրը. http://kantegh.asj-oa.am/1105/1/125-136.pdf
- Гаджиев К.С.,Большая игра на Кавевзе.Вчера,сегодня,завтра,Москва 2010,стр. 78.
- Тарасов С. Н., Мифы о Карабахском конфликте.Сборник статей, Москва, 2014, стр. 20.
- Ованнисян А., Некоторые аспекты военного искусства в период арцахской войны 1993-1994гг., Ереван, 2014, стр. 2.
- Перестройка и национальные отнашения. О событиях в Нагорном Карабахе и вокруг него, file:///C:/Users/COMPLUX/.pdf